ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ամփոփաթերթում ներառված սակագներն ու պայմանները կարող են փոփոխվել: Բիբլոս Բանկ Արմենիայի ավանդների վերաբերյալ լրացուցիչ և ակտուալ տեղեկություն ստանալու համար կարող եք զանգահարել +374 60 61 61 00 հեռախոսահամարին, այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ byblosbankarmenia.am, կամ դիմել ցանկացած մասնաճյուղ:

Մեր մասնաճյուղերը տեղակայված են հետևյալ հասցեներում.

- Աբովյան 6, Երևան
- Ամիրյան 18/3, Երևան
- Կոմիտաս 38/2, Երևան
- Բաղրամյան 84/1, Երևան

Դուք ունեք Բանկի հետ հաղորդակցվելու իրավունք ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» (fininfo.am) ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգն է:

Հրապարակված՝ 10/2024
Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Բիբլոս Բանկ Արմենիան առաջարկում է ներդնել ժամկետային ավանդ՝ բարձր տոկոսադրույքով և տոկոսագումարները ժամկետի ավարտին կամ գործողության ընթացքում ստանալու հնարավորությամբ:

1

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

ԱՐԺՈՒՅԹ	ԳՈՒՄԱՐ**	1 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ***	6 ԱՄԻՍ***	12 ԱՄԻՍ***	18 ԱՄԻՍ***	24 ԱՄԻՍ***
֏	1,000,000 - 300,000,000*	6%	7.25%	9.25%	9.75%	9.75%	10%
$	3,000 - 1,000,000*	1.25%	2%	3.25%	4.5%	4.5%	4.75%
€	2,000 - 500,000*	0.25%	0.5%	1.25%	1.75%	2%	2.75%

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը համընկնում է անվանական տոկոսադրույքի հետ:

Երբ ժամկետային ավանդը ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, վճարվելիք տոկոսագումարը հաշվարկվում է Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքով՝ պայմանով, որ այդ տոկոսները չեն կարող գերազանցել ժամկետային ավանդի տոկոսները:

Վաղաժամկետ դադարեցման դեպքում կուտակված տոկոսները վերահաշվարկվում են համապատասխան արժույթի պարզ խնայողական հաշվի տոկոսադրույքով՝

ԱՐԺՈՒՅԹ	ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ
ՀՀ ԴՐԱՄ	4.00%
ԱՄՆ ԴՈԼԱՐ	1.00%
ԵՎՐՈ	0.10%

*Նշված սահմանաչափից ավելի (ներառյալ բոլոր գործող ավանդների հանրագումարը) գումարների դեպքում տոկոսադրույքը պայմանագրային է:

Ավանդի նվազագույն չափը ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար արտերկրից բացելու դեպքում կազմում է 30,000 ԱՄՆ դոլար կամ համարժեքը այլ արժույթով:

***Տոկոսագումարները ամսական, եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան հաճախականությամբ վճարելու դեպքում անվանական տոկոսադրույքը կնվազի 0.25 տոկոսային կետով, բացառությամբ 18 կամ 24 ամսով ներգրավվող դրամային ավանդների, որոնց անվանական տոկոսադրույքը կնվազի 0.5 տոկոսային կետով:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ժամկետային ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով:

Ժամկետային ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարը չի փոփոխվում:

Այն դեպքում, երբ մինչև վաղաժամկետ լուծումը վճարված տոկոսների չափը գերազանցում է վաղաժամկետ լուծման դեպքում վճարման ենթակա տոկոսների չափը, ապա Բանկն իրավունք ունի գանձել տարբերությունը Հաճախորդի հաշիվներից կամ նվազեցնել Ժամկետային ավանդի գումարից:

Երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում միևնույն ժամանակահատվածով՝ երկարաձգման օրվա դրությամբ տվյալ ժամկետայնության և գումարի ավանդների համար Բանկի սահմանած տոկոսադրույքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Բանկային ավանդի պայմանագրի գործողության ընթացքում պայմանագրով սահմանված տոկոսների չափը չի կարող միակողմանի նվազեցվել բանկի կողմից:

Ժամկետային ավանդի ժամկետի ավարտին ավանդի գումարը մուտքագրվում է Հաճախորդի ընթացիկ կամ ցպահանջ ավանդային հաշվին՝ Հաճախորդի ընտրությամբ:

Ժամկետային ավանդի դիմաց տոկոսները հաշվարկվում են հիմք ընդունելով 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր օրացույցային տարին: Հաշվարկված տոկոսագումարները մուտքագրվում են ավանդատուի ընթացիկ և/կամ ցպահանջ ավանդային հաշվին: ՀՀ դրամով ավանդի տոկոսները վճարվում են ՀՀ դրամով, իսկ արտարժութային ավանդի դեպքում՝ Հաճախորդի ցանկությամբ ՀՀ դրամով կամ ավանդի արտարժույթով, անհրաժեշտության դեպքում կատարելով արտարժույթի փոխարկում ՀՀ դրամի՝ Բանկի կողմից սահմանած փոխարժեքով:

Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերը ենթակա են ՀՀ դատարանների իրավասությանը: Ժամկետային ավանդի սպասարկման կապակցությամբ Հաճախորդի բողոք-պահանջները կարող են ներկայացվել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Բանկը կարող է հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Հաճախորդի կողմից Բանկի դեմ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և գործարքի գումարը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը կամ

դրան համարժեք արտարժույթը: Դա նշանակում է, որ Բանկը չի կարող վիճարկել վերոնշյալ պայմաններին բավարարող պահանջներով Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված վճիռները:

ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն ֆիզիկական անձ հանդիսացող ավանդատուին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ եկամտի (վճարվող տոկոսագումարի) 10%-ի չափով և փոխանցում ՀՀ պետական բյուջե:

Տոկոսները հաշվարկվում են ավանդի ներդրման օրվանից մինչև ավանդի ժամկետի ավարտի նախորդող օրը, ընդ որում, հարկ է նշել, որ տոկոսագումարները չեն կապիտալացվում, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև կնքված գրավոր պայմանագրով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսադրույքները վերաներդնեիք ավանդի տեսքով:

Ավանդի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

ԺԱՄԿԵՏ	1 տարի
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	11%
ԱՐԺՈՒՅԹ	ՀՀ դրամ
ԳՈՒՄԱՐ	5,000,000

Ժամկետի վերջում վճարվող տոկոսագումար՝

I = 5,000,000 * 11/100= 550,000 ՀՀ դրամ

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ

$$A=\sum_{n=1}^{N}\frac{K_n}{(1+APY)^{(D_n/365)}}$$

որտեղ՝

A - ավանդի սկզբնական գումարն է։

n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է։

N- ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաեւ ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված։

Kn- ավանդի ներդրման պահին եւ/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի եւ/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր։

Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչեւ ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ։

Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0։

ՍԱԿԱԳԻՆ

Անվանում	Սակագին*
Հաշվից քաղվածքների տրամադրում	
• **յուրաքանչյուր ամիս**	**անվճար**
• լրացուցիչ՝ մինչև 6 ամիս**	3,000
• լրացուցիչ՝ 6 ամսից ավելի**	6,000
Հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում**	3,000
Ներքին լիազորագրի հաստատում**	5,000
Հրահանգներ տելեքսով, ֆաքսով կամ էլ-փոստով (տարեկան)	20,000
Աուդիտի նպատակով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում**	10,000
Կանխիկ միջոցների մուտքագրում հաշիվներին՝ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	0%
Կանխիկ 500 Եվրո թղթադրամի մուտքագրում ցանկացած հաշվին	1%
Կանխիկ միջոցների ելքագրում ընթացիկ հաշիվներից կանխիկ մուտքագրված միջոցների դիմաց (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո)	0%
ԱՄՆ դոլար կանխիկացում հաշիվներից անկանխիկ մուտքագրման դիմաց	2%
Եվրո կանխիկացում հաշիվներից անկանխիկ մուտքագրման դիմաց	2%
ՀՀ դրամով կանխիկացում հաշվից անկանխիկ մուտքագրման դիմաց	0.2%
Բանկի կողմից գնանշվող արտարժույթով հնամաշ թղթադրամի փոխանակում	3%
Մինչև 2004թ. թողարկված 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար արժողությամբ և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար արժողությամբ թղթադրամի մուտքագրում***	1%
Մինչև 2004թ. թողարկված 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար արժողությամբ և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար արժողությամբ թղթադրամի կանխիկացում	0%

*Սակագները ներկայացված են ՀՀ դրամով

**Ներառյալ ԱԱՀ

***Նշված թղթադրամներով օրական ընդհանուր մինչև 1000 ԱՄՆ դոլարի ընդունումն իրականացվում է առանց միջնորդավճարի:

Նշում. Մինչև 2016թ. հունվարի 1-ը թողարկված անգլիական ֆունտ արժողությամբ թղթադրամներ Բանկի կողմից չեն ընդունվում:

4

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

5

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Ավանդ ներդնելիս Հաճախորդն անձամբ ներկայացնում է փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

<u>Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր</u>

- Անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրային ծառայությունների համարանիշ*

<u>Բանկում լրացվող և ստորագրվող փաստաթղթեր</u>

- Ֆիզիկական անձանց բանկային հաշվի բացման և վարման պայմանները
- Ստորագրության նմուշի քարտ
- «Ճանաչիր քո հաճախորդին» ձևաթուղթ
- ՖԱՏԿԱ համապատասխանեցման ձևաթուղթ
- Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

*Կիրառելի է միայն ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ- ում կացության կարգավիճակ ունեցող և բնակվող օտարերկրյա քաղաքացիների դեպքում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Համաձայն «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի՝ Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում: